ՏԵՂԵԿԱՆՔ
ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 2016-2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը՝

- 2016-2017թթ. ինդեքսում 4.1 միավորով զբաղեցնում է 79-րդ տեղը 138 երկրների շարքում
- Բարելավել է դիրքը 3 տեղով
- Հայաստանը դասվում է Արդյունավետության վրա հիմնված փուլին
- Ըստ տարածաշրջանի ընդգրկված է Եվրասիական երկրների խմբում
- Գնահատված ԱՊՀ երկրների շարքում 6-րդն է (ներառյալ Վրաստանը)
- Հարևան երկրների շարքում վերջին տեղում է

Գլոբալ մրցունակության ինդեքսը (ԳՄԻ)՝

- Հրապարակվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF) կողմից
- Ներառում է 3 ենթաինդեքս՝ 12 հենասյուներով, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1-7 սանդղակով: Հենասյուներում խմբավորված են 114 ցուցանիշ, որից մոտ 2/3 ձևավորվում է բիզնես ղեկավարների կարծիքների հարցման հիման վրա
- 2016թ. ինդեքսում ներառվել է 138 երկիր՝ նախորդ տարվա 140-ի փոխարեն

ԳԼՈԲԱԼ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ







	Հայաստանի դիրք		Հայաստանի միավոր	
	2016-2017	Փոփոխություն	2016-2017	Փոփոխություն
Գլոբալ մրցունակության ինդեքս	79	▲ 3	4.1	▲ 0.1
Հիմնական պահանջներ	83	▼ -2	4.4	— 0.0
Ինստիտուտներ	66	▲ 10	4.0	▲ 0.2
Ենթակառուցվածքներ	82	— 0	3.8	▲ 0.1
Մակրոտնտեսական միջավայր	88	▼ -16	4.3	▼ -0.4
Առողջապահություն և տարրական կրթություն	93	▲ 2	5.4	— 0.0
Արդյունավետության խթաններ	80	▲ 4	4.0	▲ 0.2
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	71	▲ 1	4.4	▲ 0.1
Ապրանքների շուկայի արդյունավետություն	45	▲ 5	4.6	▲ 0.1
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	55	▲ 3	4.4	▲ 0.1
Ֆինանսական շուկաների զարգացում	90	▲ 4	3.7	▲ 0.2
Տեխնոլոգիական պատրաստվածություն	71	▲ 4	4.0	▲ 0.3
Շուկայի չափ	120	▼ -4	2.7	▼ -0.1
Նորարարության և կատարելագործվածության գործոններ	81	▲ 20	3.5	▲ 0.2
Գործարարության կատարելագործվածություն	81	▲ 16	3.8	▲ 0.2
Նորարարություն	87	▲ 20	3.2	▲ 0.2



Գլոբալ մրցունակության ինդեքսի երեք ենթաինդեքսներից 2-ի գծով՝ «Արդյունավետության խթաններ» և «Նորարարության և կատարելագործվածության գործոններ» արձանագրվել է առաջընթաց 4 և 20 տեղով համապատասխանաբար, իսկ «Հիմնական պահանջներ» ենթաինդեքսի գծով արձանագրվել է հետընթաց 2 տեղով:

Նախորդ տարվա համեմատ առաջընթաց է արձանագրվել 12 հենասյուներից 9-ի գծով.

- ✓ **«Ինստիտուտներ» 66 (+10).** Այս հենասյունում առաջընթաց է արձանագրվել իրավական դաշտի մարտահրավերների կարգավորման արդյունավետություն և ֆիրմաների վարքագծային ցուցանիշների գծով:
- ✓ **«Առողջապահություն և տարրական կրթություն» 93 (+2).** Առաջընթաց է տեղի ունեցել մանկամահացության և տարրական կրթության որակ ցուցանիշների մասով:
- ✓ **«Բարձրագույն կրթություն և վերապատրաստում»՝ 71 (+1).** Առաջընթաց է տեղի ունեցել հատկապես կրթության համակարգի որակ և մասնագիտացված վերապատրաստման ծառայությունների տեղական առկայություն ցուցանիշների գծով:
- ✓ **«Ապրանքների շուկայի արդյունավետություն»՝ 45 (+5).** Այս հենասյան առաջընթացը տեղի է ունեցել հատկապես շուկայում գերիշխանության աստիճան, հարկերի ազդեցությունը ներդրումների խթանների վրա, ինչպես նաև գյուղատնտեսական քաղաքականության ցուցանիշների գծով:
- ✓ **«Աշխատուժի շուկայի արդյունավետություն»՝ 55 (+3).** Առաջընթացը տեղի է ունեցել հատկապես հարկերի ազդեցությունը աշխատանքի խթանների վրա և երկրի կարողությունը տաղանդներ պահպանելու ցուցանիշների մասով:
- ✓ **«Ֆինանսական շուկաների զարգացում»՝ 90 (+4).** Առաջընթացը տեղի է ունեցել հատկապես հեշտ վարկերի ձեռքբերում և արժեթղթերի փոխանակումների կարգավորում ցուցանիշների գծով:
- ✓ **«Տեխնոլոգիական պատրաստվածություն»՝ 71 (+4).** Առաջընթացը տեղի է ունեցել նորագույն տեխնոլոգիաների առկայություն և ընկերության մակարդակում տեխնոլոգիայի կլանում ցուցանիշների մասով:
- ✓ **«Գործարարության կատարելագործվածություն»՝ 81 (+16).** Առաջընթացը տեղի է ունեցել միջազգային բաշխման նկատմամբ վերահսկողություն, արտադրության գործընթացի կատարելագործվածություն և մարքեթինգի աստիճան ցուցանիշների մասով:
- ✓ **«Նորարարություն»՝ 87 (+20).** Առաջընթացը տեղի է ունեցել նորարարության կարողություն և համալսարան-արտադրություն համագործակցություն հետազոտություն և զարգացում ցուցանիշների մասով:

Հետընթաց է արձանագրվել հետևյալ երկու հենասյուների գծով.

- ✓ **«Մակրոտնտեսական միջավայր»՝ 88 (-16).** Դիրքը հատկապես նվազել է պետական բյուջեի հաշվեկշիռ/ՀՆԱ ցուցանիշի մասով:
- ✓ **Շուկայի չափ՝ 120 (-4).** Դիրքը հատկապես նվազել է ներքին շուկայի չափի ինդեքսի ցուցանիշի գծով:

Փոփոխություն չի գրանցվել «Ենթակառուցվածքներ» 82 հենասյան գծով:

Ամենացածր դիրքը արձանագրվել է «Շուկայի չափ» 120 (-4) հենասյան գծով:

Զեկույցի համաձայն գործարարությամբ զբաղվելուն առավելապես խոչընդոտող գործոններ են համարվել հետևյալները.

1. Ֆինանսների հասանելիություն
2. Կոռուպցիա
3. Կառավարության ոչ արդյունավետ վարչարարություն
4. Հարկերի դրույքաչափեր
5. Հարկային կարգավորում
6. Ոչ ադեկվատ կրթված աշխատուժ
7. Արտաքին արժույթի կարգավորումներ
8. Ինֆլյացիա

ԱՊՀ երկրներ

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ



ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



Հարևան երկրներ

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ



ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ



ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ



ԱՊՀ երկրներ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ



ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ



ՇՈՒԿԱՅԻ ՉԱՓ



Հարևան երկրներ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ



ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ



ՇՈՒԿԱՅԻ ՉԱՓ



ԱՊՀ երկրներ





Հարևան երկրներ